ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՎԻ ԹՅՈՒՖԵՆՔՅԱՆԻՆ «Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԵԾԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՍԱՎԻ ԹԻՒՖԷՆՔԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Ցովսէփեանից տեղեկացանք, որ ԱՄՆ Կառավարութեան կողմից արժանացել էք պետական բարձր գնահատանքի՝ Էլիս Այլընտի պարգեւի: Ուրախալի այս առիթով Հայրական սիրոյ ջերմ զգացումներով ողջունում ենք Ձեզ եւ համազգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները:

Սիրելի Տիկին Սավի Թիւֆէնքեան, անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ արդէն իսկ բազում անգամներ առիթ ենք ունեցել դրուատանքով անդրադառնալու հայրենանուէր Ձեր ընթացքին, որ պատուարժան հայուհուդ ճանաչում ու բարի անուն է բերում ինչպէս Միացեալ Նահանգներում, այնպէս եւ Մայր Հայրենիքում:

Արդարեւ, քաջալերութիւն է Ձեզ պէս հայորդիներ ունենալ Միածնաէջ Մայր Աթոռի կողքին, միշտ պատրաստակամ՝ առատաձեռն ազնիւ ներդրումներով օգտաշատ ու աստուածահաճոյ ծառայութիւններ մատուցելու եւ աջակցելու Հայ Եկեղեցու տիրաւանդ առաքելութեան իրականացմանը: Ձեր եւ Ձեր ամուսնու անունները արժանիօրէն քանդակուած են Վեհարանի սիւներին արձանագրուած Մայր Եկեղեցու բարերարների անուանաշարքում, որով սերունդներ պիտի յիշեն Ձեր բարի գործերը եւ խանդավառուեն ազգասիրական, հայրենասիրական ու բարեգործական Ձեր ոգով:

Միրելի Տիկին Սավի Թիւֆէնքեան, ամենաբարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Մայր Եկեղեցուն, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ արժանիօրէն վաստակեալ խորին յարգանքով ու հեղինակութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր Սուրբ Եկեղեցուն, Հայրենիքին ու ժողովրդին:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 120